ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱԼԻՄԵՆՏԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԺԻՆ

375078 ք. Երևան, Հալաբյան 41ա, հեռ. (060) 570-478

Մեր 194 108

«27» 01 2017թ.

«Կանանց աջակցման Կենտրոն»
Հասմիկ Գևորգյանին
ք. Երևան, Թումանյան փող., 21/1

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.12.2016թ. տրված թիվ ԼԴ/0853/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Նշված կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում 26.12.2016թ. հարուցված թիվ 02802256 կատարողական վարույթով պարզվել է, որ պարտապան Լուսինե Սարգսի Ղաբուզյանը երեխաների հետ գտնվում է «Կանանց աջակցման կենտրոն»-ում՝ ք. Երևան, Թումանյան 21/1 հասցեով /հիմք՝ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.12.2016թ. կայացված «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշումը/:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով, ինչպես նաև թիվ 02802256 կատարողական վարույթի հետագա ընթացքը լուծելու նպատակով՝ Ձեզ է ուղարկվում ԴԱՀԿ ապահովող ծառայության Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժնի պետի տեղակալ Հ.Մովսեսյանի 26.01.2017թ. որոշումը պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին:

Խնդրում եմ աջակցել թիվ ԼԴ/0853/02/16 կատարողական թերթի պահանջի կատարմանը:

Առդիր՝ որոշումը «1» թերթից, ինչպես նաև թիվ ԼԴ/0853/02/16 կատարողական թերթի և Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 23.12.2016թ. որոշման պատճենները «2» թերթից:

ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

կատ. Հ.Մովսեսյան
կ/վ 02802256

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին

ք. Երևան

26.01.2017թ.

ԴԱՀԿ ծառայության Ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի բաժնի պետի տեղակալ, արդարադատության մայոր Հ.Մովսեսյանս, ուսումնասիրելով 26.12.2016թ. հարուցված թիվ 02802256 կատարողական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.12.2016թ. տրված թիվ ԼԴ/0853/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 62 և 71 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Պարտավորեցնել պարտապան Լուսինե Սարգսի Ղաբուզյանին՝ երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Որոշման պահանջները ենթակա են անհապաղ կատարման:

Որոշման պահանջները չկատարելու դեպքում կկիրառվեն «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 71 և 72 հոդվածներով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն, հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

ՈՐՈՇՈՒՄ

Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին

23.12.2016թ. ք. Վանաձոր

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Բ.Գրիգորյանի, քարտուղարությամբ Հ. Հակոբյանի, մասնակցությամբ պատասխանող, հակընդդեմ հայցվորի ներկայացուցիչ Կարինե Գասպարյանի, քննության առնելով Կարինե Գասպարյանի միջնորդությունը՝ հայցի ապահովում ձեռնարկելու մասին.

ՊԱՐԶԵՑ

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործն ըստ հայցի Լուսինե Ղաբուզյանի ընդդեմ Կարեն Խեչոյանի՝ երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասին և ըստ Կարեն Խեչոյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լուսինե Ղաբուզյանի, երրորդ անձ՝ Լոռու մարզի Արջուտ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների բնակության վայրն իր մոտ որոշելու պահանջի մասին:

Ըստ գործի տվյալների կողմերն ունեն հինգ երեխաներ, որոնցից երկուսը 17 և 15 տարեկան են, իսկ մյուսները մանկահասակ:

Մանկահասակ երեխաները՝ 2007թ-ին ծնված Կարինե Խեչոյանը, 2009թ. ծնված Կարեն Խեչոյանը և 2010թ-ին ծնված Արեն Խեչոյանը գտնվում են պատասխանող Խեչոյանի մոտ, բնակվում են առանձին, հաճախում են դպրոց Վանաձոր քաղաքում:

Մյուս երեխաները՝ Մարուսյա Խեչոյանը՝ ծնված 1999թ-ին և Մարինե Խեչոյանը՝ ծնված 2001թ-ին, գտնվում են հայցվոր Ղաբուզյանի խնամքին, բնակվում են վերջինիս հետ:

22.12.2016թ-ին պատասխանողի ներկայացուցիչ Կ. Գասապարյանը ներկայացրել է միջնորդություն՝ հայցի ապահովում կիրառելու մասին:

Համաձայն միջնորդության՝ հայցվոր Ղաբուզյանն օգտվելով այն հանգամանքից, որ պատասխանող Խեչոյանը վիրահատվել է և գտնվում տանը, իսկ երեխաներին դպրոց են ուղեկցում և հետ բերում իր ծնողները, սույն թվականի դեկտեմբերի 20-ին թիվ 6 դպրոցի տնօրենին հասվաստիացնելով, որ երեխաների հոր՝ Կարեն Խեչոյանի և նրա ծնողների հետ համաձայնեցված է, երեխաներին դպրոցից տարել է անհայտ հասցեով:

Կատարվածի մասին իրենք անմիջապես տեղյակ են պահել ոստիկանություն:

Դատական նիստում Կ. Գասպարյանը հավելեց, որ ոստիկանությունում հարցով զբաղվում են և ընդամենը փորձում են պարզել երեխաների գտնվելու վայրը:

Իրենք դիմել են նաև մարզպետարան և Վանաձորի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, բայց դեռ արդյունքներ չկան:

Նկատի առնելով, որ հայցվոր Ղաբուզյանն, ըստ գործի տվյալների, հաշվառված է Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերում և վկայակոչելով Սպիտակ քաղաքում տեղի ունեցած մանկահասակ երեխաների սպանության դեպքը՝ խնդրեց կիրառել հայցի ապահովման միջոցներ՝ բոլոր երեխաներին վերադարձնել Կարեն Խեչոյանին: Միաժամանակ արգելել հայցվոր Ղաբուզյանին երեխաներին ՀՀ-ից դուրս հանելը:

Դատարանը, լսելով պատասխանողի ներկայացուցիչ Կարինե Գասպարյանին, գտավ, որ միջնորդությունը ենթակա է բավարարման մասնակի՝ հետևյալ հիմնավորմամբ:

Գործի տվյալների համաձայն՝ հայցվոր Ղաբուզյանն, իրոք, ըստ Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերի 21.11.2016թ. գրության, դիսպանսերում հաշվառված է, սակայն ախտորոշման բնույթը դեռ ենթակա է պարզման գործի քննությամբ, ուստի հիվանդության վտանգավորությունն արդյոք կարող է խոչընդոտ լինել երեխաներին խնամելու համար, դեռ ենթակա է պարզելու:

Գործի տվյալների՝ պատասխանող Ղաբուզյանի մոտ գտնվող երեխաները հաճախում

Ըստ Կարինե Գասպարյանի դատական նիստում տրված բացատրության՝ հայցվոր Ղաբուզյան երեխաներին տարել է նրանց կամքին հակառակ:

Վերը նշվածը հաշվի առնելով, չխաթարելու համար երեխաների ուսման մեջ ունեցած հաջողությունները, նրանց հոգեկան առողջությունը, գնահատելով միաժամանակ հայցվորի կողմից կատարած արարքը, դատարանը գտնում է, որ հայցն ապահովելու համար անհրաժեշտությունից ելնելով՝ անհրաժեշտ է մանկահասակ երեխաներին անմիջապես վերադարձնել պատասխանող Կարեն Խեչոյանի մոտ, մինչև գործով դատական ակտ կայացնելը:

Երեխաներից Կարինե և Մարուսյա Խեչոյաններին հետ վերադարձնելու մասին միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ նրանք մշտապես բնակվում են հայցվորի մոտ, Կարինեն 17, իսկ Մարուսյան 15 տարեկան են և նրանց պատասխանողի մոտ տեղափոխելն առանց վերջիններիս կարծիքը հաշվի առնելը թույլատրելի չէ:

Երեխաներին ՀՀ-ից դուրս տանելու մասով միջնորդությունը ենթակա է մերժման՝ երեխաներին տեղափոխելու վերաբերյալ բավարար հիմքերի բացակայության պատճառով:

ՀՀ քաղ.դատ.օր-ի 97 հոդվածի համաձայն՝ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:

Նույն օրենսգրքի 98 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝ պատասխանողին որոշակի գործողությունների կատարելն արգելելը:

Դատարանը հիմքեր ունի արձանագրելու, որ հայցի ապահովման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

Համաձայն պատասխանողի ներկայացուցչի՝ երեխաներն ըստ իրենց տվյալների այժմ գտնվում են <Կանանց աջակցության կենտրոն>-ում՝ ք. Երևան, Թումանյան 21/1 հասցեում, հեռախոս՝ 099 88 78-08:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14 հոդվածով, դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Միջնորդությունը բավարարել մասնակի:

Արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել երեխաներին՝ Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Միջնորդությունը մնացած մասով մերժել:

Հայցի ապահովման մասով որոշումն ենթակա է անհապաղ կատարման <Դատական ակտերի հարկադիր կատարման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ ԼԿԹ

ԳՈՐԾ N ԼԴ/0853/02/16

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Բ.Գրիգորյանի, քարտուղարությամբ Հ. Հակոբյանի, մասնակցությամբ պատասխանող, հակընդդեմ հայցվորի ներկայացուցիչ Կարինե Գասպարյանի, քննության առնելով Կարինե Գասպարյանի միջնորդությունը՝ հայցի ապահովում ձեռնարկելու մասին.

23 դեկտեմբերի 2016թ.

ՈՐՈՇԵՑ

Միջնորդությունը բավարարել մասնակի:

Արգելել Լուսինե Սարգսի Ղաբուզյանին իր մոտ պահել երեխաներին՝ Կարինե Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.12.2007թ., Կարեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 23.04.2009թ. և Արեն Կարենի Խեչոյանին՝ ծնված 14.05.2010թ.:

Երեխաներին վերադարձնել հորը՝ պատասխանող Կարեն Էդիկի Խեչոյանին, մինչև թիվ ԼԴ/0853/02/16 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Միջնորդությունը մնացած մասով մերժել:

Հայցի ապահովման մասով որոշումն ենթակա է անհապաղ կատարման <Դատական ակտերի հարկադիր կատարման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Պահանջատեր

Կարեն Էդիկի Խեչոյան

ԼՄ, գ. Արջուտ, 1 փող., 26 նրբ., 1 տուն

Անձնագիր՝ AM 0210746, տրված 16.02.2011թ.

033-ից, ծնված 07.12.1968թ.

Պարտապան

Լուսինե Սարգսի Ղաբուզյան

ք. Վանաձոր, Նժդեհի փ., տուն 10ա

Նույն քարտ.՝ 007508542, տրվ. 03.12.2015թ.

003-ից, ծնված 22.01.1977թ.

Կատարողական թերթը տրվում է 23 դեկտեմբերի 2016թ.

Վճիռն ուժի մեջ է մտել 23 դեկտեմբերի 2016թ.

ԴԱՏԱՎՈՐ՝ Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ